««ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի դեկտեմբերի 2-ի, ՀՕ-267 օրենքի նախաբանում «Հայրենական մեծ պատերազմի վետերանների» բառերից հետո լրացնել «ինչպես նաև Հայրենական մեծ պատերազմի տարիներին թիկունքում անձնազոհ աշխատանքի և անբասիր զինվորական ծառայության համար նախկին ԽՍՀՄ մեդալներով և շքնաշաններով պարգևատրված անձանց» բառերը, այնուհետ՝ ինչպես տեքստում:

Հոդված 2. Օրենքի 1-ին հոդվածից հետո լրացնել հոդված 1.1՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 1.1 Հայրենական մեծ պատերազմի տարիներին թիկունքում անձնազոհ աշխատանքի և անբասիր զինվորական ծառայության համար նախկին ԽՍՀՄ մեդալներով և շքնաշաններով պարգևատրված անձանց սոցիալական պաշտպանությունը

1.Հայրենական մեծ պատերազմի տարիներին թիկունքում անձնազոհ աշխատանքի և անբասիր զինվորական ծառայության համար նախկին ԽՍՀՄ մեդալներով և շքնաշաններով պարգևատրված անձինք իրավունք ունեն՝

- անվճար օգտվել պետական ընդհանուր օգտագործման ներքաղաքային ուղևորատար տրանսպորտով (բացառությամբ՝ միկրոավտոբուսների և մարդատար տաքսի ավտոմեքենաների), ինչպես նաև Երևանի մետրոպոլիտենով.
- պետական պատվերի շրջանակներում օգտվել անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքից.
- դեղերը ձեռք բերել արժեքի 50 տոկոս զեղչով՝ բժշկի հատուկ դեղատոմսով.
- ստանալ ամենամսյա պատվովճար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափով:»:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածի երրորդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ նոր խմբագրությամբ. «Վետերաններին տրամադրվում է

ամենամսյա պարգևավճար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափով։»։

Հոդված 4. Օրենքի 6-րդ հոդվածից հետո լրացնել հոդված 6.1՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 6.1 Հայրենական մեծ պատերազմի տարիներին թիկունքում անձնազոհ աշխատանքի և անբասիր զինվորական ծառայության համար նախկին ԽՍՀՄ մեդալներով և շքնաշաններով պարգևատրված անձանց կարգավիճակը հաստատող փաստաթուղթը

Հայրենական մեծ պատերազմի տարիներին թիկունքում անձնազոհ աշխատանքի և անբասիր զինվորական ծառայության համար նախկին ԽՍՀՄ մեդալներով և շքնաշաններով պարգևատրված անձանց կարգավիճակը հաստատող փաստաթուղթը ԽՍՀՄ պարգևների և մեդալների անվանական վկայականներն են, որոնցով անձը պարգևատրվել է Հայրենական մեծ պատերազմի տարիներին թիկունքում անձնազոհ աշխատանքի և անբիծ զինվորական ծառայության համար։»։

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ին։